



մեծ տպաւորութիւն թողեց հանդիսականներին վրա: Յարութիւնեան ստացաւ բազմաթիւ ընծաներ և բուռն ծափահարութիւններ:

Հ. Ա.

# ՆԱԽԹԱՐԳԻՆԵԱՐԿԻՆԵՐԻ XVIII-Ի ՆԱԽԹԱՐԳԻՆԵՐԻ ԺՈՂՈՎՐ

I

Դեկտեմբերի 5-ին սկսվեց և 22-ին վերջացաւ Բագուում Նաւթարգիւնարեւոյնքի XVIII համագումար ժողովը՝ նախագահութեամբ Պետերբուրգից նշանակված լեւոնային գեղարտաւանարի անդամ պ. Ռուզսկիի: Ժողովներին մասնակցում էին կառավարչական մի քանի հաստատութիւնների ներկայացուցիչները:

Փոքր ինչ ուշ լինելու պատճառով ես մասնաւորութիւնների մէջ չեմ մտնի և կանգ կառնեմ միմիայն ուշադրութեան արժանի խնդիրների վրա, որոնց թիւը, սակայն, այս տարի, համեմատած նախընթաց տարիների հետ շատ քիչ էր:

Պորտուգալ, ժողովից առաջ, տպագրել էր մի շարք գեղեցուկներ, իր գործունէութեան առիթով, վերաստուգող մասնաժողովի, զանազան կոմիտեաների գործունէութեան տեղեկագիրներ և այլն, որոնք բաժանվում էին ձերբագրութեամբ հետաքրքրվողներին և հարաւորութիւն տալիս բազմաթիւ մանր կերպով ծանօթանալ այս կամ այն խնդրի հետ:

Առաջին ժողովը սկսվեց վերաստուգող մասնաժողովի տեղեկագրից: Ըստ քիչ հաստատութիւններ կը լինին, որոնց վերաստուգող մասնաժողովներին վերապահված լինի այնպիսի ծանր աշխատանք, ինչպիսին Նաւթարգիւնարեւոյնքի այդ ժողովին և աւելի քիչ կը գտնվեն այնպիսի վերաստուգող մասնաժողովներ, որոնք այնքան բարեխիղճ և մանրակրկիտ կերպով վերաբերվել իրանց պարտաւորութիւններին և այնպիսի բեղմնավոր գործունէութիւն ցոյց տալին, ինչպէս այս գէպում: Ո՛չ մի բան չէ վերաբեր իրա հայեացքից և ոչ բան չէ կանգնեցրել նրան՝ առանց ճնշվելու և տառապելու յայտնել այս կամ այն կարծիքը նկատած երկուքների մասին: Այդպէս է եղել միշտ, այդպէս էր և այս անգամ:

Նրա տպագրած տեղեկագրերը մի պատկերացում էր, որը նոյն իսկ ոչ Նաւթարգիւնարեւոյնքի հետաքրքրվողների համար, իմ կարծիքով, ընթերցանութեան նիւթ կարող է ծառայել:

Նաւթարգիւնարեւոյնքի խորհրդի գործունէութեան գլխավոր ոյժը կենտրոնացած է բժշկական օգնութեան վրա, որի վրա ծախսում է տարեկան, ընթացիկ հաշուով, մօտ 370,000 ռ., իսկ այդ գումարը կազմում է համարեալ բոլոր ընթացիկ ծախսերի մի երրորդ մասը: Դրան է նուիրել և վերաստուգող մասնաժողովը իր աշխատութեան մեծագոյն մասը՝ մի առ մի քննելով և պարզելով հիւանդանոցների աշխարհի բոլոր դրական և բացասական կողմերը:

Գրա փոխարէն հետո հիւր էի տանում իմ սիրելի ընկերներից մէկին:

Այս անգամ ամառանոցում աւելի մեծ հասարակութիւն կար. բայց կինս լուրջ կերպով ասում էր, թէ ինքը այլ ևս չէ գտնում այստեղ առավելագույն հրապոյնները: Ես չէի ծիծաղում, երբ նա աւելացնում էր, թէ գրա պատճառն այն է, որ Թ. սարում այլ ևս Մարթա չը կայ: Ես հաւատում էի, որ կնոջ համար այդպէս է: Անցեալ ամառ ես դարձեալ չը դարձեալ այդ պատճառով: Մարդը սիրով կապված էր Պետրոսի օջախի մի բուռը մոխրի հետ, ինչ կարելի էր անել: Պէտք էր միայն յարգել այդ գեղացուները: Մոտավորապէս եմ, կինս ինձ շատ է ամաչացրել այս երկու տարվայ ընթացքում: Ես անգղուշութիւն ունեցայ մի քիչ հեգնական ոճով նկարագրելու իմ ձրմոնային դժբաղդ ճանապարհորդութիւնը և մասնաւոր մի բուռը մոխրի պատմութիւնը: Կինս սաստիկ վշտացաւ. նա գիտէր, որ Մարթան անպատճառ պիտի անբարատանայ: Եւ ես, որ այդ անբարատանքն միջոցին կատարել էի մի շատ անտարբեր դեր, շարունակեալ ինքզինս նախապաշարեալութիւն, ի հարկէ, չէր կարող համոզել կնոջս:

Առաջին օրերը պէտք եղաւ ամբողջովին նուիրել ընկերիս: Նա խիստ սիրում էր որսը և եկել էր ինձ հետ այն պայմանով, որ ես

ես արդէն մի անգամ առիթ եմ ունեցել ասելու, որ Նաւթարգիւնարեւոյնքի հիւանդանոցները, թէ և իդէալական հաստատութիւններ չեն կարող համարվել, սակայն շատ և շատ բարձր են ոչ միայն Կովկասի, այլ և միւս խոշոր քաղաքների, նոյն իսկ մայրաքաղաքի շատ հիւանդանոցներից: Եւ վերաստուգող մասնաժողովը իր տեղեկագրի մէջ եթէ նկատել է այս կամ այն թերութիւնները—գրանք արդէնք եւս ոչ թէ խորհրդի անհոգութեան, այլ միմիայն միջոցների պակասութեան, որոնց լրացնելը կախված է բոլոր Նաւթարգիւնարեւոյնքից:

Սրբարարութիւնը պահանջում է խոստովանել, որ մի քանի կենսական խնդիրների վերաբերեալ խուլ և համր, իսկ մի քանիների վերաբերեալ անտարբեր խորհուրդը իր ձեռքի տակ եղած միջոցներով ոչ մի ջանք չէ խնայում բարեխաւելու հիւանդանոցների դրութիւնը, իսկ դրան բաւական չափով ձայնակցում է ամեն տարի Նաւթարգիւնարեւոյնքի տարեկան համագումար ժողովը՝ միշտ աւելացնելով նախաշարժ ծրագրված գումարների չափը: Զեմ ուզում ասել, ի հարկէ, որ հիւանդանոցները իրանց ներկայ կազմով բաւարար են. ոչ, մինչև այժմ նրանց ամենախոշոր պակասութիւնը նրանում էր կայանում, որ ներկայիս էր և չէին կարողանում տեղաւորեցնել բոլոր կարիք զգացողներին, չը կար բացառապէս կանանց և երեխաների բաժանումը: Այս տարի այդ պակասը լրացվում է նորանոր շինութիւններով, հետագայս տեղը հասակաւորների համար ընդարձակվում է և որքան նա բաւարար կը լինի,—ցոյց կը տայ հէնց առաջին տարվայ փորձը և միւս տարվայ տեղեկագրերը:

Մի սխալ, հակասական քայլ էր արել միայն վերաստուգող մասնաժողովը. ընդհանուր հիւանդանոցի ընդունելութեան չափը մեծացնելու համար նա առաջարկում է հիւանդների սնունդը փոքր ինչ նսեմացնել և դրանից առաջացած տնտեսութեամբ աւելի շատ հիւանդներ ընդունել: Այդ առաջարկը, ի հարկէ, չէր կարող կրիտիկայի դիմանալ և փառաւորապէս տապալվեց, մասնաւորապէս որ անցեալ տարվայ տեղեկագրում վերաստուգող մասնաժողովը խորհրդին մեղադրում էր սնունդի համար խընայողութիւն անելու մէջ...

Վերաստուգող մասնաժողովի կողմից բացատրութիւն էր տալիս մասնաժողովի նախագահ Ա. Սափարեանը, իսկ խորհրդի կողմից՝ նրա գործերի կատարելի Ա. Դաստակեան: Պորտուգալ նախաշարժը հիւանդանոցների պահպանութեան մշտական ծախսերի համար պահանջում էր 359,092 ռ. և 27,800՝ միանուագ ծախսերի ժողովը առաջին գումարը աւելացնում է մինչև 366,855 ռ., իսկ երկրորդը՝ 28,700 ռ. Բացի այդ 15,160 ռ. էլ յատկացվում է սանիտարական ձեռնարկութիւնների համար:

Ստատիստ

անձամբ առաջնորդեմ նրան դէպի այն տեղերը, ուր, իմ ասելով, հարուստ որս կար: Երկու օրվայ մէջ մենք մեծ տարածութիւններ չափեցինք Թ. սարի շրջակայքում: Երրորդ օրը ես իմ ուղղութիւն ընտրեցի,—դէպի անտառների կողմը: Վաղ առաւօտից մենք խուզարկում էինք լանջերն ու պուրակները, բայց աչքի ընկնող աշուղութիւն չուէինք: Ժայռից ժայռ, քարից քար անցնելով, մենք դուրս եկանք Քարակոփի հանդերը: Կէսօր էր: Յուլիտեսայ արեւի տակ ետում էր ընտրեալն ստեղծագործող ոյժի մեծ տօնը: Արտերի մէջ անդադար պսպղալով բարձրանում էր հնձուրի մանգաղը: Մենք վճեցինք հանգստանալ մի ժայռի ստուերի մէջ: Քաղցածութիւնը սկսել էր մեզ նեղել և մենք բաց արինք մեր փորքի պայտասակը:

Պայտալ ու անվրդով մեր պանիր-հացն էինք ուտում: Յանկարծ ընկերոջս որսկան շունը տեղից վեր թռաւ և ծածկվելով ժայռի միւս կողմը, բարձրացրեց սաստիկ հայոց: Ընկերս նրա ետեւից երկու քայլ առաջ սողաց, բայց շուտով էլի յետ դարձաւ, ասելով թէ մի գիւլացի է անցնում: Սակայն պարզ էր, որ քիչ մարդ չէր անցնում, այլ ուղղակի դալիս էր դէպի մեզ. շունը իր սուր, պղնձի ձայնը աւելի և աւելի բարձրացնում էր, կամ առաջ էր յարձակվում, կամ յետ-յետ նահանջում:

Ես վեր կացայ, որ տեսնեմ ինչ է կատարվում: Եւ դէմ առ դէմ պատահեցի Պետրոսին: Հնձուրի առաջակապը կապած, միայն մի կապոյտ հալաւ հագած, մի կապոյտ թաշկինակ էլ գլխին հագած, նա իր շրտ ձեռքերն ունէր միայն կատաղած գաղանի գիծաց: Ես դուրս մի վայրկեան գուցէ չը ճանաչէի նրան, եթէ

## ՆԱԽԹԱՐԳԻՆԵԱՐԿԻՆԵՐԻ

Յունվարի 6-ին.

Այսօր, Ջրօրհնէքի օրը, երանալը Ղուբա-յում հիւանդին էր, արեւ ու տաք, իսկ գետինը սառած էր: Յունվարի 2-ից մենք այդ տեսակ եղանակ ենք տեսնում, իսկ մինչ այդ օրը, երկու շաբաթվայ ընթացքում, սաստիկ ձիւն էր գալիս և սարափելի ցրտեր էր անում, ըստ Բեռլինի հասնում էր ցուրտը 18—20 սաստիճանի, որ մի չը տեսնված բան է մեզ համար:

Անս այդ էր պատճառը, որ ամեն բան մեզանում թանգացաւ. թանգացաւ մինչև անգամ փայտը, որ չը տեսնված բան է Ղուբայում. էշի բեռը փայտը, որ ծախվում էր 45—50 կ. այժմ ծախվում է 70 կ., ոչխարի միս չէ ճարվում, եթէ մորթում ևս են, ծախում են ծածուկ ֆունտը. 18—20 կ. հակառակ տակալի, իւրը նմանապէս բարձրացաւ 38 կողկից 50 կ. ֆունտը ձկնեղէն բերեց այստեղ մէկը Բագուից, ամենի համար և չը սխալվեց, քանի որ անկասկած արդիւնք ունեցաւ, բայց սխալվեց, որ նոյն Բագուից կանանչեղէն չը բերեց, որովհետեւ այստեղ ձմեռը մտնելուն պէս մենք կանաչու երես չենք տեսնում. չը նայելով, որ անս հիւղերուդ տարին է, ինչ գոյութիւն ունի Ղուբայում այդեղործական դպրոց անունով մի հիմնարկութիւն, որ ունի շատ յարմարութիւններ, բայց նա չէ կարողանում ձմեռը կանաչի ունենալ գոնէ այն չափով, որ միայն քաղաքում ծախվէր:

Դեկտեմբերի 10-ին, եկան Ղուբա Շամայու թեմի առաջնորդ Անանիա եպիսկոպոսը Ընձակ վարդապետի հետ, ֆիացին մի քանի օր, առաջնորդը արդեւ քաղաք խօսեց հայոց եկեղեցում, ուր ժողովուրդ էր մեծ բազմութիւն:

Դեկտեմբերի 11-ին Բագուի նահանգական դատարանի քրեական և քաղաքացիական բաժինները այստեղ սկսեցին իրանց գործունէութիւնը:

Դարձեալ լուրեր են պատում Պաշմաղ-Ղուբա երկաթուղու ձիւղի կառուցման մասին: Այդ գործի համար նորեւ Պետերբուրգ գնաց Ղուբայի խոշոր կալուածատէր Ֆրանսիսցի Միլե-բուրը, որը ամեն ջանք գործ է դնում գլուխ բերելու այդ մտադրութիւնը: Նա կամենում է դրամատէրէրի մի ընկերութիւն կազմել և գումար ժողովել երկաթուղու կառուցման գործը գլուխ բերելու համար: Պէտք է նկատել, որ պ. Միլեբուր առաջադէմ, ազնիւ, բանիմաց մարդ է և մեծ յոյս կայ, որ նա այդ գործը գլուխ կը բերէ, որով անկասկած կենդանի յիշատակ կը կանգնեցնէ իր համար և անգնահատելի ծառայութիւն մատուցած կը լինի մեր դժբաղդ քաղաքին:

Մ. Սալամբեգեանց

## ՆԵՐՔԻՆԵՐԻ ԼՈՒՐԵՐ

Երէկ, յունվարի 16-ին, առաւօտեան ժամը 10-ին մօտերը, Թիֆլիսի Թանգօեան ս. Առ-

չը լինէր նրա սպիտակ լայն միւրեքը:

Շահահոյցը լռեց, առաջին բարենքերիս հետ ես խառնեցի գանգաւներս ու յանդիմանութիւններ: Այս ինչ մոռացում է, այս ինչ անյայտանալ է:

Պետրոսը կանգ առաւ. նրա գունատ ու չոր դէմքի վրա սահեց վաղմիւ բարե փայտը և ես մի վայրկեան ճանաչեցի նրան: Բայց մի վայրկեան էր դա, մոռացութեան մի ակամայ վայրկեան իմ խեղճ ձեռնուս համար: Այն, ինչ տեսայ այդ վայրկեանից յետոյ, բաւական էր, որ ես առկա տեսնէի մի ուրիշ մարդ: Գիւղի փիլիսոփան սաստիկ փոխվել էր:

Այժմ նա հեռուից չը սկսեց, այլ բանութիւններով և առակներով չը զարգարեց իր խօսքը: Հանգաւոր, իր վրա վստահ մարդը չը քացել էր. նրա փոխարէն քաղցի ծանր հոգսով տանջվողն էր, որ մի քանի խօսք ասաց ինձ: Ամենից առաջ նա ինձ առաջարկեց մի հարց—ինչ անել: Ինչ էր այդ հարցի միտքը—եւ դեռ չը գիտէի, բայց իսկոյն զգացի, որ այդ հարցն է նստել նրա կողորդին, խեղդում է, չէ թոյլ տալիս ուրիշ բան տեսնել աշխարհի մէջ: Կան այդպիսի անիծված հարցեր. նրանք մարդու աչքում դառնում են մի ամբողջ աշխարհ...:

Ես նախ տարայ նրան իմ ընկերի մօտ, խնդրեցի նստել, հանգստանալ և պատմել թէ ինչ կայ:

Արտից տեսայ ձեզ այս կողմը գալիս, շուր խմելու գնացի, վերադարձին ուղեցի այս կողմով անցնել,—ասաց նա, կարծես կամենալով ներողութիւն խնդրել մեզանից, արդարաւայ մեր առջև:

Նա քաշվում էր նոյն իսկ ինձանից, չէր ու-

տուածածին եկեղեցում հրդեհ ծագեց: Հրդեհը առաջացել էր եկեղեցու վառարանից, որի ծխնելուղից բռնկվել էին փայտեայ գերանները և ապա եկեղեցու տանիքը: Բարեբախտաբար հրդեհաշէնները շուտով վրա հասան և հանգրքին կրակը: Բայց ստիպված եղան վերցնել տանիքի մեծ մասը:

Այսօր, Արտիստիքական ընկերութեան կօնցերտային դահլիճում կը կատարվի մի հետաքրքիր դասախօսութիւն (դէկտեմբերի 6-ին, սիմֆոլիում և սէր): Դասախօսողն է դոկտօրանտ Կասպեթովիչ, բեքիական «L'université libre»-ի դասախօսը, որ իր շուրջն ունի համալրած գիտական լաւագոյն ոյժեր. Դասախօսութեան ժամանակ ա. Այդէնշտէյն դաշնամուրի վրա կը ցոյց տայ Շօպէնի մի քանի պիէսները, իսկ էլիւսին վրա Բօնի, Ստահնիսլավսկու, Վիսնիսկու և ուրիշների սիմֆոնիական պատկերները: Դասախօսութիւնը բաղկացած է երեք մասից՝ պատմական, ժամանակակից, իսկ վերջաբանը նուիրված է սերլոյ, որպէս «յաւերտեանական սիմֆոլի» ընտրողման Պ. Կասպեթովիչ յայտնի է, որպէս հետաքրքիր, ոչ միայն արտասահմանում, ուր նա կարգացել է դասախօսութիւններ Վիեննայում, Ֆրէյբուրգում, այլ Ռուսաստանում, Մօսկվայում, Կիևում, Պարիզում, մեծ հետաքրքրութիւն գարթեցնելով հասարակութեան մէջ դէպի ժամանակակից արուեստի հարցերը:

«Карс» լրագիրը հաղորդում է, որ կովկասեան գլխավոր իշխանութիւնը, հարկաւոր համարելով, հայոց եկեղեցական կառուածները գանձարանի կողմից ընդունելութեան ժամանակ անկարգութիւններին մասնակցելու և իշխանութիւններին յանդուգն անհաւանդութիւն ցոյց տալու համար, գրկել Արգանանի շրջանի Ուրուտ գիւղի ազգաբնակչութեան հայկական մասը գիւղական տանուտէրի օգնակահին ընտրութեան իրաւունքից, առաջարկեց Կարսի շրջանի գիւղական նահանգապետին կարգադրել նշանակելու Ուրուտ գիւղում այդ գիւղի հայերի համար նրանց հաշին կառավարչական տանուտէրի օգնական, երկու ժամանակով, տարեկան 360 ռ. տոճիկով, տարով նրան ձրի ընակարան վառելիքով և լուստաւորութեամբ:

«Терск. Вѣд.» լրագրում տպված է հետեւեալ հաղորդագրութիւնը Վլադիկավկազում տեղի ունեցած դէպքի մասին. «Յունվարի 12-ին, երեկոյան 4 ժամից մինչև 8 ժամը, Պետերբուրգի, Մօսկվայի, Կիևի և Նովոօրոսիսկի համալսարանների ուսանողների խումբը, գիւնովցած լինելով, Ալեքսանդրովսկայա և սրան կից միւս փողոցների վրա անկարգութիւններ արեց: Երեկոյան մօտ 8 ժամին ամբողջ Եւսօկիսովսկայա փողոցով գիմեց դէպի գիւղիկայի հրամանատար գեներալ Բեզիկի ընակարանը և

գում օտարին մասնակից անել իր սրտի խորհուրդներին: Ես սկսեցի բացատրել նրան տարրական շատ բաներ, այնպիսի բաներ, որոնց վրա առաջներում նա անպատճառ կը ծիծաղէր, այնքան պարզ ու հասկանալի էին նրանք: Իսկ այժմ ուշադրութեամբ լսեց ինձ, կարծես նորից գտաւ իրան և համոզվեց, որ իմ ընկերի մօտ կարող է ինձ պատմել, թէ ինչ է պատահել:

Լալկան հառաչանքներ, թուլացող, ողորմելի դարձնող ախիւր ու վաշեր էին դուրս թափվում ձեռքուտ բերանից այն փոքրիկ պատմութեան հետ, որ ոչ նոր էր, ոչ հագուստ-գիւտ, ոչ արտակարգ: Վիշտ, տառապանք, ցաւ էր Մարթան: Անուշադն երկու գիւղ—Քարակոփը, որտեղից դուրս էր եկել նա և միւսը, ուր նա գնացել էր—բերանի խօսք էին շինել նրան: Եւ այս որքան ժամանակ—Մօտ երկու տարի: Մեր ժամանակում մեռածին անգամ մոռանում են երկու տարվայ մէջ. բայց Մարթան չէ մոռացվում, երեւի այն պատճառով, որ չէր մեռնում և միշտ իր ճակատին կրում էր իր ցաւը: Միշտ հարց ու փորձ թէ այդ ինչ ցաւ է, ենթադրութիւններ, մութ ակնարկներ, լիբը առասպելներ...

Եւ դարմանալ որ այդպէս է: Պետրոսի բալը բազմաթիւ անգամ այնպիսի տեսարանների բնի է դարձել, որ ամբողջ գիւղը կուտվում էր կտուրների վրա և նայում էր ներքեւից և բարձրից, աշից ու ձախից և դատում էր, անտանելի ու զգուշելի կերպով դատում...

(Կը շարունակվի)

խայտառակութիւններ թոյլ տուեց այնտեղ: Տեղական օստիկանութիւնը բռնեց պահակա- նոցում մինչև սթափվելը ինն ուսանողները, մէկ դերասանի և մէկ կառապանի: Նրանք բո- լորն էլ պատասխանատուութեան են ենթարկ- վում քրէական օրէնքների 38-դ յօդուածի հա- մաձայն, հաշտարար դատաւորի ձեռքով:

ՍԱՄԱՐԿԱՆԻՅ մեզ գրում են. «Ամսիս 7-ին, Ռուբէն քահանայ Բէկ-Գիւղեանցի դեկա- վարութեամբ և տեղական սերոզները մաս- նակցութեամբ այստեղի հասարակական թատ- րոնում ներկայացրվեց մեր տաղանդաւոր դրա- մատուրգի «Պէպոն»: Խաղը անցաւ բաւարար կերպով: Խորին շնորհակալութեան արժանի են բոլոր սերոզները»:

ՂԱՐԱՍՈՒԲԱՐԱՆԻՅ մեզ գրում են. «Այս տարի ևս նախկին տարիների օրինակով, տե- ղիս դպրոցի հոգաբարձու պ. Եաղճեան նուի- րեց յօգուտ ուսումնաւարանի մանկական գրա- դարանի 25 բուրքի: Մանկական գրադարան- ների օգտակարութեան մասին խօսելն աւե- լորդ է. և ահա տեղական ուսումնաւարանի ման- կական գրադարանը, բաղկացած մօտ 300 հայերէն և 100 ռուսերէն գրքերից, արդէնք է պ. Եաղճեանի այդ նպատակով նուիրած 100 բուրքով: Անշուշտ 100 բուրքին մի մեծ գու- մար չէ, բայց և պ. Եաղճեան տեղիս հայ «ուու- գերից» չէ. այստեղ կան 100 հազարներ տէր հայեր, որոնք բոլորովին անտարբեր են գէպի ուսումնաւարանը»:

ԲԱՇ գիւղից մեզ գրում են. «Ապտեմբերի վերջին կէսից մինչև յունվարի 4-ը այստեղի գիւղերում անասունների մէջ տարածված էր սիրիական տիտը և այդ ժամանակամիջո- ցում անասուններից կտորվել են 3000-ից ա- լելի: Բաշ, Սթահան, Լարաբունդար ու Ար- մուտի գիւղերը գրկվեցին շատ լծկան անա- տուններից, մանաւանդ չը կարողացան աշա- նացան անել: Եթէ կառավարութիւնը իր ժա- մանակին օգնութեան չը հասնէ, գրկված կը լինեն և գարնանացանից»:

ՍԱՄԱՐԿԱՆԻՅ մեզ գրում են. «Մեր արօ- թատան երէցփոխ պ. Ա. Հայտեմեանց հրա- ժարական տուեց և ամսիս 4-ին ժողով կայա- ցաւ նորակառուց արօթատան մէջ՝ Բէկ-Գիւ- լեանց քահանայի նախագահութեամբ: Երէք տարի ժամանակով երէցփոխ ընտրվեց պ. Ար- շակ Ուրէկեանց: Նոր երէցփոխի վրա գա- դուծիս անդամները մեծ յոյսեր են տածում: Որպէս ինտելիգենտ ու գործունէաց մարդ, յուսով ենք նա կարող կը լինի բարւոքել մեր արօթատան անտեսական կարիքները»:

ՆՈՐ-ԱՌԻՂԱՅԻՑ մեզ գրում են. «Նոյեմբե- րի 5-ին մեր թեմի առաջնորդ Այվաթեան ե- պիսկոպոսը մեկնեց Հնդկաստան: Վաղուց ի վեր մի շնորհքին մասնակցած-բժշկուհու կա- րիք էր զգացվում այստեղ, բայց այդ կարիքը մնում էր միշտ կարիք, և պառաւ տատմայ- րերը տարեկան մի որոշ տոկոս անմիջ գոհեր էին ուղարկում միւս աշխարհ: Այս անհրա- ժեշտ կարիքը ուշադրութեան առնելով, մեր նորահաստառ «Հիւանդանոց ընկերութիւնը» Ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի տեղացի վարժուհիներից մէկին՝ օր. Եղիարեթ Տէր- Մաշտոցեանին ուղարկեց Հնդկաստանի Մատ- րաս քաղաքը, բժշկութիւն սովորելու և վե- րադարձուաւ այստեղ, նոյն ընկերութեան հա- մար ծառայելու: Մտադիր է նաև բերել տալ Հնդկաստանից այն տեղ կրթված նոր-ջու- դայեցի բժիշկներից մէկնունէկին, որպէս զի դիւրութիւն տուած լինի հասարակութեանը օտարազգի և վարձկան բժիշկների բնահանգը- ներից ազատվելու: Երանի թէ մեր ազգային երկուստ դպրոցները հոգաբարձութիւնն էլ այս գովելի օրինակին հետեւէր, այն է, աշխատէր, կարելի եղածին չափ տեղական ոյժեր ստեղծել դպրոցների համար, որպէս զի գէթ այսուհե- տե այժմեան անախորժ գրութիւններից ազատ- վէին մեր կրթական հաստատութիւնները»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՀԵՏԱՅԱԾ ՄԻ ՔԱՆԻ ԳԻՄՔԵՐ

Հերթէս Սպեկտր.—Մաղաքեա Ա. Գաւազա.— Հ. Մամուկի Գաւուկի: 1 Այս վերջացող տարին՝ մասնաւորաբար ա- ռատ եղաւ ազգային և օտար մեծ դէմքերի մահով: «Մշակ» իր դարբնութիւնց առաջ գու- ժեց մի իսկական գերմանացու, ուղում եմ ա- սել գիտութեամբ մեծ, բայց գթութեամբ փոքր

մի մարդու՝ Թէօդոր Մօմզէնի մահը: Նշանաւոր գերմանացուց յետոյ էլ մեռաւ մեծ անգլիա- ցին—Հէրբէրտ Սպէնսը:

Որքան անհամակերպ էր Մօմզէն իր թիւու- նեղ հայրենասիրութեամբ, նոյնքան համակեր- ք էր Սպէնսը իր մարդու լայն համաշխար- հայնականութեամբ: Սպէնսը մէջ սիրաւ համըն- թաց էր գնում ուղեղի հետ: Մտածումներով մեծ, մեծ էր նաև զգացումներով: Սպէնսը իսկական մարդն էր:

Սպէնսը ծնվեց 1820 թ. ապրիլի 27-ին Դէրբիում: Նրա հայրը, որ նոյն քաղաքի հա- մայնաբանում պրօֆէսոր էր, իր որդու կրթու- թեան վրա լուրջ ուշադրութիւն դարձրեց:

Երբ Սպէնսը իր ուսումնաւարտեց, նախ ուսուցչութեամբ պարապկեց. յետոյ դարձաւ քաղաքային ինժեներ: 1847 թ. նա այդ պաշ- տօնն էլ թողեց և հինգ տարի շարունակ աշ- խատկեց «Էկոնօմիստ» պարբերականին:

Ան այդ միջոցում նա լայն ընդայեց իր ան- դրանիկ աշխատութիւնը՝ «Սոցիալական Հա- լաստակարգութիւն» (L'Equilibre Social), որ Սպէնսը նախաքայլը եղաւ դէպի հոշակու- Այնուհետև նա նուիրվեց փիլիսոփայական և ընկերային գիտական աշխատութիւններին, որոնք նրան առաջին տեղը տվին ժամանա- կակից խորհուրդների շարքում:

Անգլիական մտքի նշանաւոր ներկայացու- ցիչներից մինը՝ Ջոն Ստիւարթ Միլ՝ Լոկըի շարունակողն ու արժանաւոր յաջորդը՝ դրա- կան փիլիսոփայութեան և ազատ-փորձաքննու- թեան թունդ պաշտպանը, թէև փոքր գա- զաթնակէտին վրա՝ խոստովանում էր որ Սպէնսը ժամանակակից ամենամեծ միտքն էր:

Եւ արդարեւ Հէրբէրտ Սպէնսը տասնիննե- րորդ դարի ամենաբեղուն, ամենաուժեղ ու ամենախիղիւր խորհողն էր: Նրա հանձնարը ընդգրկում էր մարդկային ծանօթութիւնների բոլոր ճիւղերը:

1855 թ. նա հրատարակեց «Սկզբունք Հո- գերանութեան», 1864 թ. «Գիտութիւնների Դասակարգութիւնը», 1885 թ. «Սկզբունք Ըն- կերաբանութեան» (Principes de Sociologie), 1888 թ. «Սկզբունք Կենսաբանութեան» (Principes de Biologie), 1890 թ. «Ֆիզիքական», իմացա- կան և բարոյական դաստիարակութիւն \* և տակաւին ուրիշ մեծ ու փոքր աշխատու- թիւններ, ինչպէս «Հիմունք բնաշխարհային բարո- յագիտութեան», «Նախասկզբունք» (Principes) «Անհաւար պետութեան դէմ» և այլն և այլն:

Սպէնսը փիլիսոփայութեան մէջ տիրապե- տող գիծը բնաշխարհային վարդապետութիւնն է (L'Evolution): Ինքը՝ Դարվինից առաջ, շատ հանձնարեղ կերպով ձևակերպեց գոլիաթիոնիստ տեսութիւնը, որը Դարվին գործնական հողի վրա դրեց, փաստերով նուիրագործեց:

Սպէնսը փիլիսոփայութեան համեմատ, մեր ներքին աշխարհը, այսինքն հոգեկան, մտաւոր, բարոյական աշխարհն, ինչպէս մեր արտաքին աշխարհը, բնութիւնը, տիեզերքը, վերջապէս մի խօսքով ամեն ինչ որ գոյու- թիւն ունի, ենթարկված է բնաշխարհութեան, էվոլյուցիոնի օրէնքին:

Իսկ այդ օրէնքը կայանում է նրանում, որ ամեն ինչ սկիզբն է առնում մի տարրական, նախնական ֆակտից, որը իր տարրական, միակերպ վիճակից հետզհետէ աւելի առաջա- դէմ, աւելի այլազան վիճակների հասնելով, վերջիվերջոյ դառնում է մի բարդ ամբողջու- թիւն: Օրինակ կենսը, կենսի երկայնք, որի ամենաբարձր, ամենաբարձր ձևն է մարդը, սկիզբն է առել շատ ցածրից, միաբջիւ (unicel- lulaire) ամբից, որը չափազանց պարզ գոր- ժարանաւորութիւն (organisation) ունի: Ահա Սպէնսը փիլիսոփայութեան հիմնական գա- ղափարը:

Իսկ ինչ վերաբերում է Սպէնսը փիլիսո- փայական ուղղութեան, այսպէս ասած՝ նրա իմաստասիրական դաւանանքին, Սպէնսը համոզված կողմակից է դրական փիլիսոփա- յութեան, այսինքն փիլիսոփայական այն ուղղութիւն, որի հիմնադիրը եղաւ Օգիւստ Կոնտը:

Դրական փիլիսոփայութիւնը՝ դատապար- տում է բնաշխարհութիւնը — մետաֆիզիկան, այսինքն խորհուրդ է տալիս հրաժարելու Սկզբի և Վախճանի հարցերը շոշափելուց, Բա- ցարձակին հետադարձելուց: Որովհետև այդ տեսակ աշխատանքը՝ մարդկային մտքի համար կը լինէր մի ապարդիւն ճիգ: Դարերից ի վեր մարդկութեան մեծագոյն ուղեղները յոգնել են բնաշխարհային հարցերի վրա, ինչպէս հոգու, Աստուծոյ և ուրիշ այս կարգի հարցերի վրա առանց որ և է արդիւնքի հասնելու: Այդ հար- ցերը մնում են ու միշտ պիտի մնան մութ ճու- անդոծելի մարդկային մտքին համար:

\*) Այս գործը բարգւաճված է հայերէն:

Օգիւստ Կոնտից առաջ, մարդկութեան մե- ծագոյն խորհուրդները մինը՝ Կանտ՝ վճռական կերպով ապացուցանում էր թէ մարդկային բանականութիւնը անկարող է լուծելու փորձ- նականութիւնից (experience) դուրս մնացող հարցերը: Էմմանուէլ Կանտը բացարձակապէս հաստատում էր թէ մենք՝ նիւթի այլ և այլ ձևափոխութիւնները, երեւոյթները միայն կա- թող ենք ընկել, հասկանալ. իսկ այդ երեւոյթ- ների տակ գտնվող անձնութիւնը, նիւթի էու- թիւնը, նիւթը ինքն իր մէջ, կամ ուրիշ խօս- քով նումենը՝ (noumene) մեր հասկացողութիւ- նից խուսափում է:

Կանտ, ճիշդ է, բացարձակապէս հաստատե- լով հանդերձ մարդկային մտածումի, բանա- կանութեան որոշ սահմանները, բնաշխարհու- թեան ենթարկելով դուրս բանականութիւնը, մի խօսքով դատապարտելով հանդերձ մետա- ֆիզիկան, յետ կացաւ Սկզբի և Վախճանի հարցերը շոշափելուց. բայց իր հանձնար այդ գերմարդկային ճիգի մէջ խոնարհվեց. նա հոշակաւոր է իր փիլիսոփայութեան ժխտա- կան մասով միայն:

Ահա Կանտի՝ բանականութեան այդ հոյա- կապ ընդադաժութիւնից յետոյ, Օգիւստ Կոնտը երևան եկաւ և հիմնեց իր դրական փիլիսո- փայութիւնը:

Սպէնսը՝ այդ փիլիսոփայութեան կողմնա- կից, բնականաբար, չէր կարող մետաֆիզիկան չը դատապարտել: Նա նոյնպէս ընդունում էր, որ մարդկային ուղեղը պէտք է սահմանափակ- վի, երկայնքների և նրանց անփոփոխ յարա- բերութիւնների ուսումնասիրութեամբ. այ- սինքն գիտութեան սահմանից պէտք չէ դուրս գալ: Եւ սրա համար էլ Սպէնսը՝ գոյութիւն ունեցող բոլոր բաների շրջանակը բաժանում էր երկու մեծ մասերի. ձանաչելի և Անձա- նաչելի: Գիտութեան առարկայ կարող է լինել միայն ձանաչելին, իսկ Անձանաչելին մնում է մեր քննութեան, մեր գիտութեան սահմանից դուրս: Մենք նրա մասին գիտենք միայն այն՝ որ նա կայ, գոյութիւն ունի: Այդ պարզ հա- ստատումից աւելին անել մեր ուժերից վեր է: Ուրեմն, եթէ Սպէնսը փիլիսոփայութիւնը ամփոփեց, կունենանք հետեւել բանաձևը.— Մենք անկարող ենք ըմբռնելու Բացարձակը, մեր ծանօթութիւնները յարաբերական են, մենք կարող ենք հասկանալ, բացատրել երե- լոյթները միայն:

Այս պատճառով էլ Սպէնսը մարդը կհան- քը նուիրված եղաւ գիտութեան, գիտութեան բոլոր ճիւղերին, քաղաքական, տնտեսական, ընկերաբանական, բարոյական, բնական և այլն: Սպէնսը հաւատում էր, հաստատում էր թէ կարելի է ընդհանուր բաղադրութեան հաս- նել: Միայն թէ այդ բաղադրութեան պայ- մանը՝ կառավարական աղբիւրութիւններից դուրս ապրելու մէջ է: Մարդը, անհատը պէտք է լինի ազատ, բոլորովին ազատ ընկերու- թեան մէջ: Մի խօսքով Սպէնսը, Անձաչելի պե- տքեան դէմ գործով հակվում էր գէպի ծայ- րայեղ ազատականութիւնը, անիշխանութիւնը:

Սպէնսը ապրում էր բոլորովին քաշված, ընկերութիւնից հեռու: Նա, իր միւս մեծ հայ- րենակցի՝ Դյալուստի նման չէր ընդունել լու- րսութեան տիտղոսը, նոյնպէս Սպէնսը մեթոդի- ցայ և այլ պատուաւորութեան, որոնք, իրեն հիաց- ման արտայայտութիւն, ընծայվում էին գիտա- կան հաստատութիւններից: Այսպէս նա չըն- դունեց Ֆրանսիայի Գաղաքական և Բարոյա- կան Գիտութիւնների Ակադեմիայի պատուան- ղաւ Գիտութեան տիտղոսը, որը առաջարկում էին նրան:

Սպէնսը մահով անհետացաւ «Վիկտորիա» կան շրջանի» մեծ մարդկանց վերջինը:

Հետաքրքիրն այն է, որ այդ մեծ խորհողը աւելի թանգ գնահատված էր, աւելի լայն ժո- ղովրդականութիւն էր վայելում Ֆրանսիայում, Ռուսաստանում և Երեմանիայում, քան իր բուն հայրենիքում: Մարգարէն իր դաւառում պատիւ չունի:

Տիգրան

ՀԱՌԱՒՈՐ ԱՐԵՆԵԼԻՔՈՒՄ

Եւրոպական և Կորեական հարցը: Արթուր Ստէր, «Review of Reviews» հանդէսի հոշա- կաւոր խմբագիրը, անգլիական «Fortnightly Review»-ի մէջ վերոյիշեալ հարցի մասին մի լուրջ ուսումնասիրութիւն տպագրելով՝ հետե- լեալ կարծիքն է յայտնում:

Նապոլիոնի պատմութիւնը ցոյց է տալիս, գրում է Ստէր, որ կորէական հարցը Նապո- նիայի համար մի կենսական հարց է, համա- րեա կենսի և մահուան հարց: Ընդհակառակը նոյն հարցը Ռուսաստանի համար չունի մի և նոյն կարեւորութիւնը: Ռուս պետութիւնը Կո-

րէայի նուաճումով ձգտում է իր տարական կայսրութեան սահմանները ընդարձակել և ծո- վային հաղորդակցութեան մի գիծ հաստատել Վաղիլիստոսի և Պօրտ-Արտիւրի մէջտեղ: Ռուսաստանը, իրապէս, վաճառականական ոչ մի շահ չունի Կորէայում, որը ոչ մի կերպով անհրաժեշտ չէ ռուս պետութեան կենսակա- նութեան: Իսկ, փոխադարձաբար, Նապոլիոնի պետական անձերը՝ մանչուրիական հարցը, բաղադրումով կորէական հարցին, նկատում են իբրեւ մի անշահ հարց: Նրանք ընդունում են, որ երբ մի ազգ իր արիւնն է թափել, զրամ ծախսել մի դաւաժող տիրապաւոր համար, նուաճողները իրաւունք ունեն այնտեղ մնա- լու, և այս տեսութեան վրա հիմնվելով՝ Նա- պոլիոնի դիւանագէտները երբեք չեն սպա- սում, որ Ռուսաստանը Մանչուրիայից հեռա- հայ: Միակ բանը, որ նրանք պահանջում են, Մանչուրիայի բաց—դուռ հոշակութեան, նոյն հողի վրա հաստատված հազարաւոր եւապոնցի գաղթականների վաճառականութեան առաջ: Նապոլիոն՝ միմիայն մանչուրական հարցի համար Ռուսաստանի հետ պատերազմելու եր- բէք չի համաձայնվի: Նա այդ մասին չէ էլ մտածում, բայց խնդիրը փոխվում է, երբ վեճի առիթ են տալիս կորէական գործերը: Այդ դէպքում Նապոլիոն միշտ պատրաստ է կռուի դիմելու:

Միքէլանջիլոսափիլի է պատերազմը.—Լօնգո- նի լրագիրները աւելի լաւատես են վերաբեր- վում գործերի դրութեանը Հեռու Արեւելքում և պատերազմը անխուսափելի չեն համարում: «Daily Telegraph» լրագրի Պետերբուրգի թղթ- թակիցը հաղորդում է, որ չը նայելով Նապո- նիայի յաճախութեանը, Պետերբուրգի պաշտօ- նական շրջաններում հաւատում են, որ կարե- լի է խուսափել պատերազմից: Անգլիական լը- րագիրն աւելացնում է, որ ռուսաց գիւյրմա- տիան ցրտահամար է բաւարարութիւն տալ Նապոլիոնի օրինական այն բոլոր պահանջնե- րին, որոնք չեն հակասի ռուսաց կայսրութեան կենսական շահերին: Սակայն, «Standard» լրագրի թղթակիցը Տօկիոյից հաղորդում է, որ ռուս-հապոնական ընդհարման վերաբերմամբ Եւրոպայում տաճած յոյսերը չեն բաժանում Նապոլիոնի պաշտօնական շրջանները:

Նապոլիոնի քի Անգլիան.—«New-York He- rald» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հա- ղորդում է, որ Անգլիայի բարեկամական բա- զաքականութիւնը դէպի Նապոլիոն ռուսաց բաղադրական շրջանների լուրջ ուշադրութիւնն է գրաւում: Ներկայ րազմում պարզ գզացվում է, որ Ռուսաստանը պատերազմ է մղում ոչ այնքան Նապոլիոնի, որքան Անգլիայի դէմ,— աւելացնում է թղթակիցը.— և որ ռուս-հապո- նական ընդհարման գլխաւոր պատճառը անգլ- յո-հապոնական դաշնակցութիւնն է: Այն բո- պէին, երբ անգլո-հապոնական դաշնագիրը հինգ նոր էր ստորագրված, ռուս հեռատես բաղադրագէտներից շատերը առում էին, որ այդ դաշնագիրը հաւասար է Ռուսաստա- նին պատերազմ յայտարարելուն, որովհետև նա խախտում է պետութիւնների հաւասարա- կչութիւնը հեռու Արեւելքում: Առնաաբաւ Անգլիայի դէմ տիրում է մեծ դժգոհութիւն, և այժմ նոյն թշնամական զգացմունքները տարածվում են Ամերիկայում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—«Tribuna» լրագիրը ծանուցանում է, որ Ֆրանսիայի հանրապետութեան հրապարակա- ւորէի Հոսոմ այցելութեան թուականը որոշված է առաջիկայ ապրիլի 6-ին: Հոսոմի քաղաքա- դրութիւնը նախապէս կարգված է այն մասնա- խմբի, որ պաշտօն ունի օտնական հանդէսնե- րներ կազմակերպելու: Պատրաստված յատա- կազմի համաձայն, նախապէս Լուրէ՛ կայա- րանում պէտք է ընդունվի Վիկտոր-Էմմանուէլ թագաւորի կողմից. իսկ ընդունելութեան հան- դէպ պիտի կատարվի Եղեղրա հրապարակում բաղադրաւորի կողմից: Արքունիքում ճաշ պի- տի արվի և յետոյ ընդունելութիւն կայանայ Կապիտալի մէջ: Զօրահանգէ՛ Պրատի դէ Կաս- տելլոյում և պաշտօնական հանդիսաւոր ներ- կայացում երաժշտական և պատերազմային մա- սերով: Արքայինայի թատրոնում: Հոսոմի քա- ղաքապետութիւնը իր ծախքով պէտք է դա- րարէ և լուսավորէ Հոսոմի գլխաւոր պատու- հաներն և հրապարակները, մասնաւորաբար Կուրիւնայի հրապարակը: Փողոցների և հրա- պարակների շքեղապարուրում համարեալ թէ մի և նոյն եղանակով պիտի կատարվի, ինչ կերպով որ կատարվեց Վիեննա կայսրի և Է- դուարդ թագաւորի այցելութեան ժամանակ: Պիտի կազմակերպվեն գիշերային շքեղ հան- դէսներ: «Վալալիա ռուսիկանալի» յայտնի հեղինակի՝ Մատիկանի դեկլամարութեամբ մի փայլուն նուագահանդէս տեղի պիտի ունենայ և Կուրիւնայի վրա կատարվի մի շքեղ շահա-

